

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳՈՌԱ ՍՊԸ-ն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/083 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	<p>Ցուցանակի հիմնակմախքը (կարկասը) պետք է պատրաստված լինի քառակուսի մետաղական կոնստրուկցիայից: Ցուցանակի բարձրությունը պետք է լինի 1.20 մ., լայնությունը 1 մ., իսկ ընդհանուր բարձրությունը ոտքերի հետ միասին գետնից հաշված 1.70-1.80 մ.: Ցուցանակի ոտքերը պետք է լինեն հաշվարկված այնպես, որպեսզի ցուցանակի շահագործման ժամանակ ցուցանակը չճկվի և մնա անշարժ: Ցուցանակի հետնամասը, որի վրա պետք է ամրացված լինեն էջերը պետք է պատրաստված լինի կապույտ անփայլ ՄԴՖ-ից: Ցուցանակը պետք է լինի գրքի նման էջերով թերթվող: Թերթերը պետք է պատրաստված լինեն լամինատից, թերթի բարձրությունը 95-100 սմ, լայնությունը 40-45 սմ: Ամեն էջի վրա պետք է լինի 6 A4 ֆորմատի թղթի համար նախատեսված գրպաններ՝ թուղթը ամրացնելու համար, որոնք պետք է ծածկվեն թափանցիկ օրգանական ապակիով և հնարավորություն ունենան կողպվելու: Թերթերի քանակը 9 և հետնամասի վրա ամեն կողմից 1 էջ: Թերթերը հիմնակմախքին պետք է ամրացված լինեն ծխնիների միջոցով: Ցուցանակի վերին հատվածից հաշված 23-25սմ լայնության վրա պետք է լինի ՀՀ պետական դրոշը, որի վրա երեք լեզվով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պլաստմասե տառերով գրված լինի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԹՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» գրվածքի ձախ մասում մաքսային ծառայության զինանշանը, որի օրինակը կտրամադրվի Էլեկտրոնային տեսքով: Գրվածքի տեսակը «GHEA Grapat» գույնը սպիտակ, շրիֆտը 270 ± 10: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները պետք է փոշեներկված լինեն հակակոռոզիոն ներկով: Ներկի գույնը պետք է լինի մոխրագույն: Ցուցանակի գծագիրը կցվում է (տես նկար 1): Այլ պայմաններ: • Մատակարարվող ապրանքը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված: • Ապրանքի մատակարարումը,</p>

բեռնաթափումը և տեղադրումը իրականացնում է Մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով: • Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ՝ պատվիրատուի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից 365 օրացուցային օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГОРА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 11СЧ-ЕЦДЦ12Р-21/083 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	